# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Նախագիծ

արձանագրային

............ 2017 թվական

**ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

**ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ**

**Փաստաթուղթը մշակող մարմինը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն**

**Ամփոփ համառոտագիրը**

Ժամանակակից հասարակություններին բնորոշ է միջպետական հարաբերությունների ընդլայնումը, առևտրատնտեսական կապերի խորացումը, գիտության և տեխնիկայի առաջընթացը և գիտատեխնիկական տեղեկատվության պարբերական փոխանակումը: Այս տեսանկյունից ավելի մեծ կարևորություն է ստանում օտար լեզուների դերը՝ որպես աշխարհում գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալ-տնտեսական զարգացումների և միջմշակութային հարաբերությունների, ինչպես նաև տարբեր մշակույթների ներկայացուցիչների շփման, հաղորդակցման գործուն միջոց:

Օտար լեզուների տիրապետումը կարևոր է նաև տարբեր մասնագետների համար՝ իրենց մասնագիտության մեջ միջազգային զարգացումներին հետևելու, այլալեզու գործընկերների հետ շփումների, միջազգային հարթակներում սեփական փորձը և ձեռքբերումները ներկայացնելու, այլոց փորձին ծանոթանալու և այլ նկատառումներով: Անկախացումից և կրթական

բարեփոխումների առաջին փուլից հետո հանրակրթության համակարգում օտար լեզուների դասավանդման ասպարեզում որակական լուրջ տեղաշարժեր են կատարվել, որոնք դեռևս բավարար չեն: 21-րդ դարը, որպես միջազգային, միջմշակութային հաղորդակցությունների և տեղեկատվության ակտիվ փոխանակման դար, նոր մարտահրավերներ է առաջացնում ազգերի և պետությունների համար և այդ համատեքստում, առաջնային է լեզվական պատնեշների հաղթահարումը: Ակնհայտ է, որ նոր ժամանակների պահանջները բավարարելու համար հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում օտար լեզուների դասավանդման նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխությունն անհրաժեշտություն է: Բացի այդ, վերոնշյալ հաստատություններում օտար լեզուների դասավանդման հայեցակարգային դրույթների մշակումից և հանրակրթական առարկայական չափորոշիչների առաջին սերնդի ստեղծումից անցել է շուրջ 10 տարի, ուստի ժամանակի պահանջներից հետ չմնալու, ինչպես նաև կրթական ընդհանուր գործընթացը բարելավելու համար անհրաժեշտ է վերանայել օտար լեզուների դասավանդման գործող հայեցակարգային հիմունքները, պետական և առարկայական չափորոշիչները:

Մայրենին անձի ազգային ինքնությունը պահպանող կարևորագույն գործոն է, իսկ օտար լեզուները՝ մայրենիի հենքի վրա, անձի բազմակողմանի **զարգացման և դաստիարակության գործիք** են: Օտար լեզուների ուսուցման նպատակը պետք է լինի նախապատրաստել սովորողներին միջլեզվական և միջմշակութային շփումներին, մշակույթների երկխոսությանը, ձևավորել սովորողին՝ որպես միջմշակութային հաղորդակցության սուբյեկտի, որը լեզուների յուրացման ընթացքում ձեռք է բերում գիտելիքներ նաև իր երկրի և ուսումնասիրվող լեզուների երկրների և դրանց մշակույթների մասին: Հանրակրթական  առարկաների (հայոց լեզու, գրականություն և օտար լեզուներ) ուսուցումը պետք է հիմնվի ընդհանուր հայեցակարգային դրույթների վրա, մշակվեն չափորոշիչներ՝ հաշվի առնելով նաև միջառարկայական կապերի շեշտադրումը: Լեզուների ուսուցումը պետք է նպաստի  և՛ մայրենի, և՛ օտար լեզուներով հաղորդակցական մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, լեզվաբանական գիտելիքների ձեռքբերմանը, լեզվատրամաբանական մտահորիզոնի ընդլայնմանը:

**1.Ներածություն**

Կրթական համակարգի  բարեփոխումների և արդիականացման մեր ժամանակներում առանձնապես կարևորվում է օտար լեզուների ուսուցման մակարդակի և որակի բարձրացումը, հատկապես համաշխարհային և եվրոպական միասնական կրթական տարածքին միանալու Հայաստանի ձգտման համատեքստում:

Տեղեկատվական հասարակության պայմաններում ապրող մարդու համար օտար լեզուներով հաղորդակցվելու կարողությունները դյուրացնում են մշակութային երկխոսությունը և նրա մուտքը համաշխարհային հանրություն: Այս տեսանկյունից հատկանշական են Եվրախորհրդի կողմից հռչակված լեզվաքաղաքականության սկզբունքները.

- լեզվական և մշակութային բազմազանություն (diversity),
- բազմալեզվություն (հասարակության՝

multilingualism/անհատի՝plurilingualism),

- բոլոր լեզուների համարժեքության ընդունում,
- ազգամիջյան և միջմշակութային արդյունավետ հաղորդակցություն,
- բնակչության ազատ տեղաշարժ, փոխըմբռնում և համագործակցու-թյուն:
- Օտար լեզուների նկատմամբ միասնական մոտեցումը հիմնվում է լեզուների զուգամերձության վրա: Երկու և ավելի լեզուների համադրման պայմաններում շատ ավելի հեշտ է գտնել այնպիսի նմանություններ, որոնք դյուրացնում են նոր լեզվական երևույթների ընկալումն ու ըմբռնումը, որը նպաստում է սովորողների հաղորդակ-ցական, լեզվամտածողական կարողությունների զարգացմանը: Անձի բազմակողմանի զարգացման կարևոր նախապայման է բացի մայրենիից նաև առնվազն երկու այլ լեզուների իմացությունը, որն օտա-րախոս հանրության և օտարալեզու մշակույթի հետ շփման, ինչպես նաև սեփական մշակույթն այլոց ներկայացնելու կարևորագույն միջոց է:

Մեր ժամանակներում ՏՀՏ-ները մուտք են գործում մարդու կենսագործունեության բոլոր, այդ թվում նաև՝ դպրոցական ոլորտ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն օտար լեզուների դասերին նպաստում է ուսուցման արդյունավետությանը, մեծացնում է սովորողների անհատական լեզվական կարողությունները, ճանաչողությունը, այլընտրանքային և փոխկապակցված մեթոդների կիրառման հնարավորու-թյունները: Այս իրավիճակում ուսուցիչը դադարում է գիտելիքների հաղորդման միակ աղբյուրը լինելուց, քանի որ սովորողն ինքը պետք է կողմնորոշվի համացանցում և իր պահանջմունքներին համապատասխան աղբյուրներ գտնի: Կրթական համակարգում լայն կիրառություն են ստացել սոցիալական ցանցերը (WEB 2.0), որոնք հնարավորություն են տալիս ստեղծելու ուսումնա-կան հաստատության կրթական կայքը, անցկացնելու հեռավար պարապմունք-ներ, հանդիպումներ, գիտաժողովներ, խորհրդատվություններ՝ հետադարձ կա-պի ապահովմամբ: Կարևոր է նոր ուղղության՝ **մեդիակրթության (media education)** ի հայտ գալը, որն օգնում է սովորողներին՝ ուսումնասիրելու զանգ-վածային հաղորդակցության (մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի, կինոյի, համացանցի և այլն) օրինաչափությունները, ազդեցության մեխանիզմները և դրանց վատ ազդեցությունից պաշտպանվելու միջոցները:

Հայաստանում հանրակրթության համակարգը, ըստ էության, միալեզու է՝ օտար լեզուների հերթագայված ուսուցմամբ. կրթության լեզուն հայերենն է, 2-րդ դասարանից պարտադիր դասավանդվում է ռուսերեն, 3-րդ դասարանից՝ անգլերեն/ֆրանսերեն/գերմաներեն/իսպաներեն, կամ որևէ այլ լեզու, 5-րդ դասարանից որոշ դպրոցներում արդեն դասավանդվում է երրորդ օտար լեզու, որի նպատակն է նպաստել սովորողների՝ օտար լեզուների տիրապետման զարգացմանը, ուսումնասիրվող լեզուների և մշակույթների բազմազանություն ապահովելուն՝ անգլերենի գերակշռությունը հաղթահարելու և կրթական համակարգում ուսումնասիրվող օտար լեզուների խախտված համա-մասնությունը վերականգնելու հաշվառմամբ:

## 2. Նախապատմություն, խնդիրներ, նպատակներ

Կրթությունը ժամանակակից հանրույթի (սոցիումի) զարգացման կարևորագույն նախապայմանն է: Այն պետք է համընթաց լինի հասարակության զարգացմանը: Ուստի, պետության մենաշնորհն է ապահովել նոր պայմաններին համապատասխան կրթական համակարգ, որը ենթադրում է **կրթական հարացույցի փոփոխություն. անցում՝ գիտելիքների պաշարի կուտակումից դեպի կյանքում սեփական տեղը գտնելն օժանդակելուն,** ուսուցչակենտրոն ուսուցումից դեպի անձնակենտրոն ուսումնառություն, գնահատումից դեպի ինքնագնահատում, ուսուցման եզակի միջոցի կիրառումից դեպի բազմատեսակ միջոցների (multimedia) կիրառում, տեղեկատվության հաղորդումից դեպի տեղեկատվության փոխանակում և այլն: Այս ամենը հիմնվում է կրթական քաղաքականության հետևյալ հայեցակարգային գերակայությունների վրա.

- հանրայնություն,
- ժողովրդավարություն,
- անձնակենտրոն մոտեցում,
- իրազեկված և գործուն մոտեցում,
- հաղորդակցական մոտեցում
- կրթական համակարգի թվայնացում:

Հասարակության հանրայնացման և ժողովրդավարացման սկզբունքներին համապատասխան հռչակվել է կրթության նոր՝ անձնակենտրոն հարացույց, որը որպես կրթության հիմնական նպատակ է դիտարկում ազատ, կրթված ու զարգացած անձի ձևավորումը, որն ունակ է ապրելու և ստեղծագործելու հարափոփոխ աշխարհում:

Օտար լեզուների ուսուցման և ուսումնառության գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակակից թվային տեխնոլոգիաների ուսուցողական ներուժն ու գործառույթները.

Ուսումնական գործընթացի թվայնացում, այսինքն՝ հագեցնել ուսումնական գործընթացը բազմազան միջոցներով՝ համապատասխանեցնելով ժամանակակից թվային տեխնոլոգիաների հնարավորություններին:

Ցանցային հաղորդակցություն և համագործակցություն (հեռավար ուսուցման, առցանց նախագծերի, հետազոտական աշխատանքների, փորձի փոխանակման, խորհրդակցությունների, տեսաժողովների և այլնի հնարավորություն):

Սովորողների հաղորդակցական, այդ թվում՝ միջմշակութային կարողությունների անհրաժեշտ ունակությունների ձևավորում:

Համակարգչային և տեղեկատվական գրագիտություն. տարբեր աղբյուրներից տեղեկատվություն հայթայթելու, ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներով այն մշակելու, դասակարգելու, պահպանելու և աշխարհի ցանկացած անկյուն փոխանցելու հնարավորություններ:

Լեզվական հաղորդակցությանբնական մթնոլորտի ստեղծում:

Հետադարձ կապի բազմազան հնարավորությունների իրացում:

Թվարկված գործառույթները նպաստում են սովորողների խմբի և նրանցից յուրաքանչյուրի ուսման  շահագրգռվածության (մոտիվացիա), հետաքրքրության, ակտիվության աճին, զբաղվածությանը և նյութի անհատական ընկալմանն ու յուրացմանը:

Դպրոցում օտար լեզուների ուսուցման համակարգն արմատական փոփոխու-թյուններ է կրում: Ժամանակակից կրթական հարացույցին համապատասխան կրթական համակարգը պետք է հիմնվի այնպիսի փոխկապակցված գերակայող գործոնների վրա, ինչպիսիք են.

- հասարակության սոցիալական պատվերը,
- լեզվաքաղաքականության գերակա սկզբունքները,
- հաղորդակցական և միջմշակութային մոտեցումների փոխկապակցված լինելը,
- վերիրական և նոր տեխնոլոգիաներին ուսուցողական գործառույթով օժտելը,
- յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկություններն ու հետաքրքրությունները հաշվի առնելը,
- տեղեկատվություն հայթայթելը և հաղորդակցվելը,
- սովորելը, գնահատելը, ինքնագնահատելը և այլն:

Օտար լեզուների ուսուցման նպատակների և խնդիրների իրականացման համար պետք է հիմնվել այնպիսի համակարգի վրա, որտեղ որպես լեզուների ուսուցման վերջնարդյունք դիտարկվում են կարողություններն ու հմտությունները: Այս տեսանկյունից նպատակահարմար է.

- վերանայել օտար լեզուների ուսուցման գործընթացը՝ սկսած չափորոշիչներից մինչև ուսումնական ծրագրեր, դասագրքեր, ուսումնական նյութեր և դասապլաններ:
- նպաստել օտար լեզուների՝ մասնավորապես այնպիսի լեզուների, որոնք անգլերենի անհամաչափ տարածման հետևանքով դուրս են մղվում հանրակրթության համակարգից (օրինակ՝ գերմաներեն, ֆրանսերեն)
- կրթական համակարգի բոլոր աստիճաններում (նախադպրոցական, դպրոցական, բուհական) բարձրացնել օտար լեզուների ուսուցման որակը, այդ թվում՝ նաև միջազգային հավաստագրման ենթակա լեզուների ուսուցանման որակը,
- պահպանել լեզվակրթության շրջանակներում լեզուների զուգամերձության սկզբունքը, միասնական մոտեցում ցուցաբերել օտար լեզուների դասավանդմանը,
- օտար լեզուների ուսուցման ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել սովորողների ուսումնական հիմնարար կարողությունների ձևավորմանը, որն էական է բոլոր առարկաների համար և կնպաստի միջառարկայական ինտեգրմանը,
- որպես լեզվակրթության նպատակ դիտարկել ոչ միայն գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը, այլ նաև յուրաքանչյուր նոր լեզվի յուրացման արդյունքում լեզվական փորձի ընդլայնումը:

Օտար լեզվի՝ որպես ուսումնական առարկայի դասավանդումը, ըստ էության, սովորողի անձի բազմակողմանի զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված միասնական նպատակային գործընթաց է:

Ներկայումս ընդունելի մոտեցում է մի կողմից՝ ժամանակակից և հեռանկարային հասարակության, մյուս կողմից՝ անհատի պահանջմունքների ձևավորման գործընթացը:

Այդ առումով առանձնացվում է երկու հիմնական նպատակ.

- Օտար լեզուների ուսուցումը հանրակրթության համակարգում,
- Օտար լեզվի խորացված ուսուցումը այս կամ այն առարկայական ոլորտում (ֆիզիկա, մաթեմատիկա, աշխարագրություն և այլն), այսինքն՝ մի շարք առարկաններից որոշ թեմաների՝ հայերենի զուգահեռ դասավանդում նաև օտար լեզվով ավագ դպրոցում**:**
- Անհրաժեշտ է կրթության համակարգում որոշել լեզուների տեղն ու դերը, դրանց ուսուցման նպատակները, բովանդակությունն ու ռազմավարությունը՝ հաշվի առնելով միջառարկայական կապերն ու ընդհանրությունները:

Օտար լեզուների ուսուցման գլխավոր նպատակը սովորողի բազմակողմանի զարգացումն է՝ հաղորդակցության կարողությունների ձևավորման միջոցով, որը պետք է ապահովի ցանկալի արդյունք: Տվյալ դեպքում մոտեցումը ավանդականից տարբերվում է նրանով, որ կարևորվում է ոչ միայն այն, թե ինչ պետք է սովորեցնել, այլ նաև այն, թե որը պիտի լինի ուսուցման արդյունքը, այսինքն՝ ի՞նչ վերջնարդյունք ենք ակնկալում: Այստեղ վճռորոշ գործոնն այն է, թե որքանով են սովորողի ձեռքբերումները մոտենում չափորոշիչում նշված նպատակներին (օտար լեզվակիրների հետ շփում, հաղորդակցում, աշխատա-շուկայում մրցունակության մեծացում և այլն):

Օտար լեզվի ուսուցման գերակա նպատակը հաղորդակցության կարողությունների և դրանց միջոցով սովորողի անձի՝ որպես միջմշակութային հաղորդակցության սուբյեկտի ձևավորումն է:

Հաղորդակցվելու կարողությունը, որպես նպատակ, ըստ Եվրախորհրդի մոտեցման, ունի հետևյալ հիմնական կառուցվածքային բաղադրիչները.

- Լեզվական կարողություն (linguistic competence), որը ենթադրում է լեզվական միջոցների (հնչյունաբանական, բառապաշարային, քերականական, ուղղագրական) տիրապետում: Այն դրսևորվում է խոսքում.
- ընկալողական (receptive)՝ ունկնդրելը, ընթերցելը,
- վերարտադրողական (productive)՝խոսելը (մենախոսություն / երկխոսու-թյուն), գրելը, ինչպես նաև գրավոր կամ բանավոր թարգմանությունը, մեկնաբանությունը և այլն,
- հանրալեզվաբանական կարողություն՝ (sociolinguistic competence) ենթադրում է տվյալ իրադրությանը համապատասխան լեզվական միջոցների ճիշտ ընտրություն և գործածություն,
- հանրամշակութային կարողություն՝ (sociocultural competence) ուսուցանվող լեզվի երկրի ազգային-մշակութային

առանձնահատկությունների իմացությունն է և խոսքի կառուցումը՝ հաշվի առնելով տվյալ հանրության մշակութային արժեքները,

- գործնական կարողություն՝ (pragmatic competence) առնչվում է խոսքում և տեքստերում լեզվական պաշարի գործածությանը՝ հաղորդակցության մեխանիզմներին համապատասխան,
- փոխհատուցման կարողություն՝ (compensatory competence) գիտելիքների սահմանափակությունը հաղթահարելու կարողություն. հասկանալու և հասկացվելու նպատակով  իրեն ծանոթ լեզվական և արտալեզվական այլ միջոցների դիմելը սովորողի կողմից,
- սոցիալական կարողություն՝ սովորողի՝ զրուցակիցների հետ հաղորդակցվելու հնարավորության դյուրացում:
- ուսումնաճանաչողական կարողություն՝ յուրաքանչյուր ուսումնական առարկայի՝ տվյալ դեպքում օտար լեզուների ուսուցման հիմնական խնդիրը, որն առավելապես դրսևորվում է հաղորդակցության միջոցով:

Բացահայտելով բոլոր լեզուների յուրացման համար ընդհանուր, առանցքային բաղադրիչները՝ անհրաժեշտ է հստակ տարանջատել նպատակները. վերջնական նպատակներից բացի՝ սահմանել նաև միջանկյալ նպատակներ  (յուրաքանչյուր դասարանի համար) և մասնավոր նպատակներ (յուրաքանչյուր դասի համար): Համաեվրոպական համակարգի կարողությունների բնութագրիչներից  յուրաքանչյուրն, ըստ էության,  կարող է հանդես գալ որպես մասնավոր «փոքր» նպատակ:

Համապարփակ ուսումնական կարողությունների (универсальные учебные умения-УУУ) թվին կարելի է դասել նաև այնպիսի կարողություններ, ինչպիսիք են.

- առավել էական տեղեկատվության առանձնացումը,
- գլխավոր և երկրորդական տեղեկատվությունների տարբերակումը,
- սեփական դատողությունների փաստարկումը, հիմնավորումը,
- եզրահանգումներ անելը, ընդհանրացումը և այլն:

Այսպիսով, պետք է իրագործվեն լեզվի հաղորդակցական-ճանաչողական գործառույթները (communicative-cognitive), որոնք լեզվական ուսուցման համար ուսումնական նպատակի համարժեք, հավասարազոր բաղադրիչներ են: Այս տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում օտար լեզուների՝ որպես ուսումնական առարկայի և որպես հաղորդակցության միջոցի նկատմամբ դպրոցականների իմացական հետաքրքրությունների զարգացումը և արդյունքում օտարալեզու հաղորդակցության կարողություններին ինքնուրույն տիրապետելու ունակությունները:

Կարողությունների ձևավորմանն ուղղված  գործընթացում նպատակները ձևակերպելիս շեշտը  դրվում է բնութագրիչների (descriptors) վրա, որոնք հանդես են գալիս որպես մասնավոր նպատակներ՝ ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)  մակարդակների (դպրոցում օտար լեզուների համար. տարրական դպրոց՝ A1, միջին դպրոց՝ A2, ավագ դպրոց՝ B1):

3. **Առաջարկվող լուծումներ, առավելություններ**

Օտար լեզուների ուսուցման արդյունավետության համար կարևոր են և՛ արդիական չափորոշիչներն ու ծրագրերը, և՛ դասագրքերն ու ձեռնարկները: Սակայն դրանք կյանքի կոչելու, իրականացնելու համար անհրաժեշտ է երկու կարևոր հանգամանք. համապատասխան ժամաքանակ և աշակերտների համապատասխան թվաքանակ խմբերում:

Անհատական մոտեցման սկզբունքի տեսանկյունից օտար լեզուների ուսուցման անհրաժեշտ պայմաններ պետք է ստեղծել նաև առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար**:** Այն ենթադրում է.

- անձնակենտրոն մոտեցում՝ սովորողների անձնական ներուժի բացահայտման ու զարգացման համար առավելագույն հարմարավետ պայմանների ստեղծման նպատակով, ինչը նպաստում է յուրաքանչյուր սովորողի սոցիալականացմանը, նրանց կրթական կարիքների բավարարմանը,
- նրանց համար սոցիալական հարմարեցման (ադապտացիայի) հավասար հնարավորությունների ստեղծում.
- երեխաների հատուկ կարիքներին համապատասխան՝ ծրագրերի և ուսումնամեթոդական նյութերի ստեղծում՝ նրանց անհատական կրթական ուղղվածությանը համապատասխան, անհրաժեշտության դեպքում նաև հեռավար ուսուցման կազմակերպում,
- առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կարիքներով երեխաների հետ աշխատող մանկավարժներին ոչ միայն լեզվական մասնագիտական, այլ նաև հոգեբանական խորհրդատվություն, այդ թվում՝ նաև հեռակա,
- առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողներին հոգեբանական և մանկավարժական աջակցություն, ինչպես նաև ներառական կրթության իրականացման համար ընտրված դասարանների աշակերտների սոցիալ-հոգեբանական նախապատրաստում:

Լեզուների ուսուցման մակարդակը բարձրացնելու և օտար լեզվի մասնագիտական հմտությունները զարգացնելու նկատառումով կարելի է ավագ դպրոցի հոսքային դասարաններում ժամեր հատկացնել մասնագիտական առարկաների որոշ թեմաներ զուգահեռաբար նաև օտար լեզուներով ուսումնասիրելու համար:

Ըստ սովորողների ընտրության՝ 10-12-րդ դասարաններում օտար լեզուն կարող է հանդես գալ որպես.

- պարտադիր դասընթաց,
- առարկա՝ սովորողի ընտրությամբ,
- դասընթաց՝ ըստ նախասիրության:

Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան՝ բոլոր հոսքերի համար կարող են նախատեսվել օտար լեզվի հատուկ դասընթացներ:

Ավագ դպրոցը, որպես նախամասնագիտական կրթություն իրականացնող

ուսումնական հաստատություն, ի թիվս այլ խնդիրների, պետք է նպաստի նաև սովորողների մասնագիտական կողմնորոշմանը: Այդ նպատակին են ծառայում տարբեր հոսքերը:

Ավագ դպրոցում հոսքային ուսուցման կազմակերպման լավագույն տարբերակ գտնելու նպատակով դիտարկենք տարբեր երկրներում գործող ավագ դպրոցի հոսքային խմբերի մի քանի մոդել:

- Ներդպրոցական մասնագիտացում` ընդհանուր, բնագիտական, հումանիտար: Չնայած ընդհանուր հոսքի բնույթին` այստեղ չի բացառվում, սովորողների հետաքրքրություններին համապատասխան, ներդասարանային կամ միջդասարանային ընտրովի խմբեր կազմավորելը:
- Ցանցային հոսքերի կազմավորում. մասնագիտացված ուսուցումը կազմակերպվում է` ներգրավելով մեկ այլ ուժեղ ուսումնական կամ հասարակական կազմակերպություն, որը ռեսուրսների կենտրոնի դեր է կատարում: Փաստորեն, թե՛ դպրոցը, թե՛ հրավիրված կողմն իրենց ներուժով ապահովում են մասնագիտացումը: Այսինքն` դպրոցն իրականացնում է այն, ինչը տվյալ հոսքում կարող է կատարել իր ուժերով, մնացածն իր վրա է վերցնում ռեսուրսների կենտրոնը:
- Հեռավար ուսուցում. մեկ այլ տարբերակ է սովորողներին դպրոցից դուրս, բայց դպրոցի հետ համագործակցող այս կամ այն հաստատության հետ հեռավար ուսուցման մեջ ներգրավումը: Այս դեպքում աշակերտը գիտելիք ստանում է ոչ միայն այն դպրոցում, որտեղ սովորում է, այլ նաև դպրոցի հետ համագործակցող մասնագիտական կառույցներում:

Ելնելով հասարակության սոցիալական պահանջներից և լեզվակրթության ժամանակակից միտումներից` հանրակրթությունը պետք է կազմակերպել այնպես, որ սովորողները տիրապետեն մայրենիին` հայերենին և օտար լեզուների: Դրա համար անհրաժեշտ է.

- հանրակրթության համակարգում օտար լեզուների ուսուցման համար մշակել նոր սերնդի չափորոշիչներ և ուսումնական ծրագրեր,
- օտար լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցման նախատեսված կարողություններին հասնելու համար անհրաժեշտ և բավարար ժամաքանակ ապահովել,
- դասերը կազմակերպել փոքր խմբերով,
- պայմաններ ստեղծել օտար լեզուների խորացված ուսուցման համար` հետագա մասնագիտացման նպատակով:

Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներին (լսողության, տեսողության խնդիրներով) օտար լեզուների ուսուցման համար պետական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան հատուկ ծրագրեր, ուսումնական նյութեր, անհրաժեշտ տեխնիկական միջոցներ ապահովել, այդ թվում` նաև հեռավար ուսուցման համար: Այդ երեխաների համար, ուսումնական նյութերից բացի, նաև հանրապետության լավագույն մասնագետների կողմից վարվող օրինակելի տեսադասերի փաթեթներ պատրաստել:

4. **Օտար լեզուների ուսուցման առանձնահատկությունները**

Ժամանակակից լեզվակրթության և օտար լեզուների ուսուցման առանձնահատկություններն են.

- **Միջմշակութայնություն**. օտար լեզուն լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրն է, ուստի դրա ուսումնասիրությունը նպաստում է ժողովուրդների փոխըմբռնմանը, միջմշակութային դրական հարաբերությունների ամրապնդմանն ու փոխհարստացմանը: Դպրոցականների հաղորդակցական և հանրամշակութային իրազեկության զարգացումը հնարավորություն է տալիս նրանց իրավահավասար գործընկեր լինելու օտար լեզվով միջմշակութային հաղորդակցության գործընթացում:
- **Միջառարկայական ինտեգրում.** օտար լեզվի և մյուս առարկաների ինտեգրումը և միջառարկայական կապերը նպաստում են երեխաների կողմից աշխարհի ու երևույթների միասնական, ամբողջական ընկալմանը, տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի ու գաղափարների համադրմանը, իմաստավորմանն ու գնահատմանը, որը խթանիչ գործոն է սովորողների ճանաչողական, ստեղծագործական գործունեության համար: Օտար լեզվով խոսքի բովանդակությունը կարող է պարունակել տվյալներ գիտելիքների ամենատարբեր բնագավառներից (գրականություն, արվեստ, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա և այլն), որն առավելագույնս մեծացնում է օտար լեզուների իմացության արժեքը՝ որպես տեղեկատվության ստացման, փոխանակման ու հաղորդակցության միջոց:
- **Բազմամակարդակություն.** մի կողմից՝ լեզվական տարբեր միջոցների տիրապետման անհրաժեշտություն, մյուս կողմից՝ հաղորդակցական կարողությունների (ունկնդրել, խոսել, կարդալ և գրել) ձևավորում, ավելին՝ օտար լեզվի օգտագործումով որևէ հանրօգուտ գործունեության ծավալում (օրինակ՝ նախագծային աշխատանք, համայնքային ծառայություն կամ ծառայության միջոցով ուսումնառություն):
- **Բազմագործառություն.** կարող է հանդես գալ և՛ որպես ուսուցման նպատակ, և՛ որպես միջոց՝ տարբեր բնագավառներից տեղեկություններ քաղելու համար:

Օտար լեզուների ուսուցումը, սովորողների դաստիարակությունը պետք է ընթանան անձնակենտրոն, հաղորդակցական-ճանաչողական մոտեցումների իրագործմամբ: Այսինքն, պետք է նկատի ունենալ, որ մանկավարժական գործընթացի կենտրոնում սովորողն է՝ իր հնարավորություններով, պահանջմունքներով, տարիքային և անհատական առանձնահատ-կություններով, ձեռքբերումներով ու դժվարություններով: Դրանք պետք է գիտակցի ուսուցիչը՝ դրսևորելով հանդուրժողական վերաբերմունք սովորողների նկատմամբ: Ուսանելով օտար լեզուներ՝ սովորողները ձեռք են բերում այդ լեզվով շփման և հաղորդակցման կարողություն, որը ձևավորվում է ուսուցչի, մյուս սովորողների և այլ անձանց հետ ակտիվ փոխներգործուն

(ինտերակտիվ) համագործակցության ընթացքում,

Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում օտար լեզվի ուսուցման վերը նշված հիմնական սկզբունքների համաձայն՝ լեզվակրթությունը պետք է հիմնված լինի լայն **հանրամշակութային համա-տեքստի վրա**, ինչպես նաև միտված լինի ուսուցման հաղորդակցական նպատակի իրագործմանը: Այդ նպատակն ապահովում է իրական գործնական արդյունք, այն է՝ օտար լեզվով հաղորդակցության հիմքերի ստեղծում, անձի հոգևոր և մտավոր զարգացում: Օտար լեզուների ուսումնասիրության շնորհիվ սովորողների գիտակցության մեջ տեղի ունեցող տարբեր լեզվական համա-կարգերի փոխներգործության և համեմատության հիման վրա ձևավորվում և զարգանում են համընդհանուր գործառնություններ՝ խոսքային կարողությունները, լեզվամտածողությունը և, ընդհանուր առմամբ, բարեկիրթ շփման կարողությունները: Ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը օտար լեզուների ուսուցման պարագայում ուղղված է հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, որը դիտարկվում է որպես օտար լեզուների ուսուցման/ուսումնառության գլխավոր նպատակ և իրականացվում է հան-րակրթական դպրոցի բոլոր աստիճաններում (տարրական, միջին և ավագ):

Խոսքի բոլոր ձևերը փոխկապակցված, փոխպայմանավորված են, ուստի դրանց ուսուցումը պետք է իրականացվի համաձայնեցված փոխադարձ կապի մեջ՝ մի կողմից, մյուս կողմից՝ տարբերակված մոտեցում ցուցաբերելով դրանցից յուրաքանչյուրի ձևավորմանը: Նման մոտեցման արդյունքում սկզբում յուրացվում է բանավոր ուսումնական նյութը, որն այնուհետև ամրապնդվում է գրելու և կարդալու միջոցով:

Լեզվական և խոսքային նյութի ընտրությունն ու կիրառումը, ինչպես նաև կարողությունների ու հմտությունների ձևավորումը պետք է իրականացվի կա-ռուցվածքային-գործառական մոտեցման և կաղապարման (մոդելավորման) հիման վրա: Ելնելով խոսողի նպատակից և պայմանավորված հաղորդակցական խնդրի բնույթով՝ (ինչ-որ բան հարցնել, հաղորդել, խնդրել, հաստատել, ժխտել, բնութագրել երևույթը կամ գործողությունը և այլն), սովորողները տիրապետում են  ճիշտ խոսքին:

Ուսումնական գործընթացի կազմակերպումը պետք է արդարացնի ուսումնառության դրդապատճառները: Ուսումնական դրական դրդապատճառները մեծապես խթանում են սովորողի հետաքրքրությունների, լեզվամտածողության, ինչպես նաև ճանաչողական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Խնդիրների հաջորդ խումբն առնչվում է կրթության բովանդակության արդիականացման ժամանակակից միտումներին: 20-րդ դարի վերջի և 21-րդի քաղաքական և սոցիալ-տնտեսական փոխակերպումները էական ազդեցություն թողեցին կրթական համակարգի վրա՝  ակադեմիական ինքնավարություն տալով բարձրագույն ուսումնական հաստատություններին, ապահովելով կրթական հաստատությունների բազմազանություն, տարբերակված կրթական ծրագրերի առկայություն, կրթության ոչ պետական հատվածի զարգացում: Այս գործընթացներն իրենց արտացոլումն են գտել և ամրագրվել տարբեր օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում:

Կրթական քաղաքականության գլխավոր խնդիրն է ապահովել կրթության որակը՝ պահպանելով նրա հիմնարար բնույթը և բավարարելով անձի, հասարակության և պետության արդիական ու հեռանկարային պահանջմունքները: Օտար լեզուների ուսուցման բովանդակությունը ներառում է լեզվաբանական, մեթոդաբանական, հանրալեզվաբանական և հանրամշակութային բաղադրիչներ, մասնավորապես՝

- թեմատիկա՝ ըստ շփման, հաղորդակցության հիմնական ոլորտների, երկրագիտական, մշակութաբանական տեղեկատվություն,
- լեզվական նյութ (հնչյունաբանություն, բառապաշար, ուղղագրություն, քերականություն),
- խոսքային նյութ (խոսքային նմուշներ և կաղապարներ, կայուն բառակապակցություններ, դարձվածային միավորներ, տեքստեր),
- գիտելիքներ, կարողություններ, հմտություններ :

Օտար լեզուների ուսուցման հիմքը խոսքային նմուշներն են**,** որոնք իրենց որոշակի իմաստից բացի՝ ունեն նաև ընդհանրացված իմաստ, ինչը հնարավորություն է տալիս, ըստ տրված նմուշի, նմանատիպ այլ նախադասություններ կազմելու: Յուրաքանչյուր խոսքային նմուշ ընդգրկում է մեկ քերականական դժվարություն և ուսուցանվում է որոշակի տրամաբանական հաջորդականությամբ, օրինակ՝ առարկայի (գոյական), նրա որակի կամ հատկանիշի (ածական), գործողության (բայ) կամ գործողության հատկանիշի (մակբայ) անվանումները:

Կրթության էությունը սոցիալական փորձի նպատակաուղղված փոխանցումն է: Օտար լեզուների կարգավիճակը կարևորվում և որոշվում է դասավանդվող **մ** յուս բոլոր առարկաների տեսանկյունից: Ընդ որում, հանրակրթական առարկաներից յուրաքանչյուրի համար ուսուցման նպատակներն ու բաղադրիչները տարբեր և որոշակի բովանդակություն են ստանում: Այս տեսանկյունից էական գործոն է առանձին թեմաների միջառարկայական համաձայնեցումը**,** այդ թվում՝ որոշակի փուլում դրանց համաձայնեցումը երկրորդ և երրորդ լեզուների այն նյութի հետ, որը նախատեսված է ուսուցման համար:

Այս իմաստով մայրենի լեզվի ծրագիրն արդեն պետք է ներառի այն լեզվական երևույթները, որոնք կնախորդեն մյուս լեզուների ուսուցման ծրագրերում դրանց կիրառությանը:

Կարևոր է սովորողներին ընդգրկել նախագծային-հետազոտական գործունեության մեջ՝ դիտարկումներում և փորձարկումներում, այդ թվում ներգրավելով նաև նոր մեդիա տեխնոլոգիաներն ու համացանցային պաշարները:

Լեզուների ուսուցման ոլորտում նոր, հետաքրքիր մոտեցում է բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցումը՝ Նյութի և լեզվի համաժամանակյա ուսուցում/ՆԼՀՈՒ/ (CLIL - Content and Language Integrated Learning): Այս մոտեցման էությունն այն է, որ օտար լեզուն ուսուցանվում է այլ առարկաների նյութի հիման վրա (ֆիզիկա, մաթեմատիկա, աշխարհագրություն, պատմություն և այլն): ՆԼՀՈՒ–ը մանկավարժական մոտեցում է, որի ժամանակ լեզուն և որևէ այլ առարկայի հատուկ բովանդակությունը ուսուցանվում են համատեղ:

Օտար լեզուների փաստացի գիտելիքները միջոց են դառնում ուսումնասիրվող այլ առարկաների բովանդակության յուրացման համար: Նման մոտեցման շնորհիվ դասավանդվող մյուս առարկաների միջոցով ապահովվում է օտար լեզվի առավել խորը յուրացումը: Այս մոտեցման շնորհիվ մայրենի և օտար լեզուներով նույն նյութի զուգահեռ դասավանդումը դառնում է միասնական անընդհատ գործընթաց: Ընդ որում, նման համաժամանակյա դասընթացները մեծացնում են սովորողների շահագրգռվածությունը` օտար լեզուն կիրառելով միմյանց հետ խնդիրներ քննարկելու համար:

5. **Ուսուցիչների վերապատրաստում**

Օտար լեզուների ուսուցման դրվածքի բարելավումն անհնար է առանց որակյալ ուսուցչական կադրերի: Հայեցակարգային, բովանդակային և մեթոդական փաստաթղթերի, մոտեցումների յուրաքանչյուր փոփոխություն պետք է ուղեկցվի ուսուցիչների վերապատրաստումներով: Բացի այդ, այս փաստաթղթերը պետք է դառնան բուհական ծրագրերի մաս, ապագա ուսուցիչներն արդեն սովորելու տարիներին պետք է ուսումնասիրեն կրթական նոր փաստաթղթերը: Լուրջ մարտահրավերներ կան ավագ դպրոցում օտար լեզուների ուսուցման տեսանկյունից: Այստեղ ընդգրկվում են տարբեր հիմնական դպրոցների տարբեր օտար լեզուների տիրապետող սովորողներ: Հատկապես ֆրանսերեն և գերմաներեն սովորած երեխաների փոքր թվի պատճառով դպրոցը հաճախ այդ լեզուների ուսուցիչներ չի ունենում: Արդյունքում աշակերտները ստիպված են լինում անավարտ թողնել իրենց հիմնական օտար լեզվի ուսումնասիրությունը և նոր օտար լեզու սովորել: Այս պարագայում հրատապ է դառնում մեկից ավելի օտար լեզուներ (անգլերեն-գերմաներեն, անգլերեն-ֆրանսերեն, անգլերեն-իսպաներեն) դասավանդելու հմտություններ ունեցող ուսուցիչներ ունենալը, իսկ մանկավարժական բուհերը այսպես կոչված «բազմալեզու» ուսուցիչներ չեն պատրաստում, որն արդիական պահանջ է: Երկլեզու ուսուցիչների (ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն) պահանջարկ կարող է լինել նաև աշակերտների քիչ թվաքանակ ունեցող, հատկապես սահմանամերձ և լեռնային գյուղերի դպրոցներում:

**Ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման մոտեցում (CPD)**.

Ուսուցիչների մասնագիտական զարգացումը` ուղղված ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանը, շարունակական գործընթաց է**,** այն չի կարող ավարտվել մեկ վերապատրաստմամբ: Անհրաժեշտություն է ծագում մասնագիտական զարգացման շարունակական համակարգի ներդրման, համակարգ, որտեղ ուսուցիչը ինքն է նախաձեռնում իր մասնագիտական ու անձնական որակների զարգացումը, կարող է ընտրել մասնագիտական զարգացման այնպիսի ուղի, որը համապատասխանում է իրեն և բավարարում իր կարիքները ու ծառայում նպատակներին: Զարգացման ուղին կարող է ներառել առցանց , առկա կամ հեռակա ուսուցում, սեմինարներ, խորհրդակցություններ, մասնագիտական համաժողովներ և այլն:

Այս տեսանկյունից նպատակահարմար կլինի մշակել օտար լեզուների ուսուցչի մասնագիտական գործունեության չափորոշիչներ, որոնք ուսուցչի աշխատանքի գնահատման հստակ չափանիշներ կսահմանեն (որպես օրինակ կարող է ծառայել «Օտար լեզուների ապագա ուսանող-ուսուցիչների եվրոպական թղթապանակը» (ՕԼԱՈՒՈՒԵԹ, EPOSTL), որը նպատակահարմար է կիրառել ուսուցիչների հերթական որակավորման և տարակարգերի շնորհման գործընթացում):

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է պնդել, որ իրավիճակի բարելավումը հնարավոր է դպրոցում լիարժեք լեզվակրթության խնդրի լուծման պարագայում՝ սովորողներին բազմազգ և բազմամշակութային, ժողովրդավարական հասարակության մեջ ապրելուն և գործունեություն ծավալելուն նախապատրաստելով: (Օտար լեզուների ուսուցման բարելավման նպատակը բնավ սովորողներին բազմազգ և բազմամշակութային, ժողովրդավարական հասարակության մեջ ապրելուն և գործունեություն ծավալելուն նախապատրաստելը չէ: Մենք ապրում ենք և շարունակելու ենք ապրել միազգ(մոնոէթնիկ) երկրում): Այդ առումով օտար լեզուն նպաստում է ընդհանուր առմամբ կրթության նոր որակի ձևավորմանը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգը հայրենական կրթական համակարգին հարմարեցնելուն:

Սովորողի՝ որպես բազմակողմանի զարգացած անհատի ձևավորումը պետք է իրականացնել նրա՝ լեզվական հաղորդակցության կարողության լիարժեք ձևավորման միջոցով:

Անհրաժեշտ է ձեռնարկել մի շարք գործնական քայլեր, որոնք կնպաստեն օտար լեզվի՝ որպես սովորողի անձի զարգացման ու դաստիարակության միջոցի, կարգավիճակի բարելավմանը. Մասնավորապես.

- ապահովել օտար լեզուների ուսումնասիրման անհրաժեշտ պայմաններ ժամաքանակ, խմբերում աշակերտների փոքր թվաքանակ, այլընտրանքային դասագրքեր, մեթոդական ուղեցույցներ, ձեռնարկներ և այլն,
- նախադրյալներ ստեղծել օտար լեզուների հենքային և խորացված ուսուցման համար,
- ապահովել սովորողների կրթական պահանջմունքները, ինչպես նաև հաշվի առնել նրանց նախասիրությունները, հետաքրքրությունները և ապագա մասնագիտացումը,
- ավագ դպրոցում իրականացնել մի շարք առարկաներից (օրինակ՝ պատմություն, ֆիզիկա, մաթեմատիկա, աշխարհագրություն և այլն) որոշ թեմաների կամ հատուկ դասընթացների դասավանդումը նաև օտար լեզուներով,
- ապահովել հիմնական դպրոցում լեզվական հաղորդակցական կարողության նվազագույն տիրապետումը՝2, իսկ ավագ դպրոցում՝ B1.2 մակարդակներով,
- շեշտը դնել կրթության վերջնարդյունքի վրա,
- բոլոր օտար լեզուների նկատմամբ իրականացնել միասնական

մոտեցում: